



Ի ԿԵՂԵՑԵԱՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵՆԹԱՑԱՆՁՆԱԽՈՒՄԻ ՆԻՍՏ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Ե. Հ. Խորհուրդի կազմակերպությամբ և Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Նորին Ամենապատուութիւն Շնուտա Գ. Պապ և Պատրիարքի հրաւերով, Կիրակի 27 Փետրուարին, Գահիրէ ժամանեցին բազմաթիւ Աստուածաբաններ, մինչև Ծաբաթ 4 Մարտ 1989 տեղի ունենալիք հաւաքին մասնակցելու, որուն օրակարգի հարցերն էին Հոգեւոր վերանորոգութիւն եւ արդի աշխարհի մէջ համայնքային հոգեւոր արթնութիւն, այժմէական խնդիրները:

Եգիպտահայ թեմէն հաւաքին դիտողի հանգամանքով ներկայ ըլլալու համար նշանակուեցաւ Արժ. Տ. Սարգիս Բհն. Մելքոնեան:

Ժողովականները նիստի գումարուեցան, Եգիպտոսի Արևմտեան անապատին մէջ Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Անպա Պիշոյ վանքին մէջ:

Չորեքշաբթի 1 Մարտի երեկոյեան ժամը 8.30-ին, Ն. Սրբութիւն Շնուտա Գ. Պատրիարք ի պատիւ ժողովական հիւր Աստուածաբաններու, Գահիրէի Ապպասիէի Անպա Ռուէյս Աթոռանիստ վանքին մէջ ընթրիքի հրաւիրած էր համայնքներու պետեր, կարևոր անձնատրութիւններ, պետական նախարարներ: Սոյն ընթրիքին ներկայ եղաւ Առաջնորդ Գերշ. Տ. Զատեն Սրբ. Արքեպս. Չինչիանեան: Ընթրիքէն ետք ա-

ռիթ ստեղծուեցաւ ծանօթանալու հիւր հոգևորականներուն:

Կիրակի 5 Մարտին, ժողովականները բաժնուելով զանազան խումբերու, Գահիրէի մէջ զանազան վանքեր, եկեղեցիներ, հնագիտական վայրեր այցելեցին: Նախապէս եղած կարգադրութեան համաձայն խումբ մը այցելեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ մեր եկեղեցին, առաւօտեան ժամը 11.30-ին, ուր հիւրերը ընդունեցան Արժ. Տ. Պարգև Բհն. Նալպանտեան և Արժ. Տ. Սարգիս Բհն. Մելքոնեան: Ողջոյնի և բարի գալստեան խօսք արտասանեց Գերշ. Առաջնորդ, Տ. Զատեն Սրբ. Արքեպս. Չինչիանեան և միատեղ աղօթք մատուցուեցաւ Անգլիերէն լեզուով և մեր շարականներով:

Եկեղեցւոյ արարողութենէն ետք, Ազգային Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ Տիկնանց Խնամակալութեան կողմէ պատրաստուած հիւրասիրութիւն: Հիւրերուն բաժնուեցան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ երգուած Ս. Պատարագի ձայներիգներ:

Ազգային Առաջնորդարանին առջև լուսանկարուելէ ետք, հիւրերը հրաժեշտ առին:

ԹՂԹԱԿԻՑ

